ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հոկտեմբերի 7-ից 11-ը Վրաստանի Հանրապետությունում (Թբիլիսի)՝ Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված «APMG Public-Private Partnerships (PPPs) Foundation Course» խորագրով դասընթացին մասնակցության արդյունքների մասին

1. **Գործուղվողը, զբաղեցրած պաշտոնը՝**

   Արմեն Մանուկյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024թ. սեպտեմբերի 27-ի թիվ 2288-Ա հրամանի համաձայն 2024 թվականի հոկտեմբերի 7-ից 11-ը գործուղվել եմ Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաք:

3. **Հրավիրող կողմը՝**

   Ասիական զարգացման բանկ

4. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն «APMG Public-Private Partnerships (PPPs) Foundation Course» խորագրով դասընթացին:

5. **Քննարկված թեմաները՝**

   «APMG Public-Private Partnerships (PPPs) Foundation Course» դասընթացի ընթացքում ներկայացվել են պետություն-մասնավոր գործընկերության (այսուհետ՝ ՊՄԳ) հայեցակարգը՝ որպես ենթակառուցվածքների ձեռքբերման և կառավարման տարբերակ, ՊՄԳ ուղեցույցի նպատակների համար այս տերմինի շրջանակը և վերջինիս հիմնական բնութագրերը: Ներկայացվել են նաև ՊՄԳ-ի այն ասպեկտները, որոնք ներառում են ՊՄԳ-ի պատշաճ կառուցվածքի և ՊՄԳ գործընթացի ամբողջ ընթացքի արդիականությունն ու առանձնահատկությունները, ներառյալ գործնական տեսանկյունից գործընթացը կազմող փուլերից յուրաքանչյուրի նկարագրությունը:

6. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝</u>**

Դասընթացի ընթացքում նշվել է, որ ՊՄԳ-ն ենթակառուցվածքների և ծառայությունների ձեռքբերման միջոցներից մեկն է: ՊՄԳ մոտեցումը կարող է զգալի օգուտներ բերել, մի շարք պայմանների բավարարման պարագայում: ՊՄԳ-ները կարող են դիտարկվել որպես նոր կամ արդիականացված ենթակառուցվածքներ ստեղծելու գործիք: Այսպիսով, հնարավոր է առավելագույն օգուտ քաղել գնումների այս տարբերակից՝ լրացնելով ենթակառուցվածքների բացերը՝ արդյունավետ և ծրագրային կերպով ավելի շատ մասնավոր կապիտալի և փորձագիտական գիտելիքների ներգրավման միջոցով:

7. **<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝</u>**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ սույն դասընթացի շարունակականության ապահովման և մասնակիցների կողմից ձեռք բերված գիտելիքների գործնականում կիրառման:

8. **<u>Ստորագրությունը, ամսաթիվը՝</u>**

Արմեն Մանուկյան

14 հոկտեմբերի, 2024թ.